ձեռն հասանէր, զմերկս զգեցուցանէր, զքաղցեալսն կերակրէր, զմոլարսն խրատէր, զստահակս և զանհոգս տիրապետէր եւ ի գործի կացուցանէր, դրամի տէր առնէր, կարգէր եւ ի տեղիս մարդկան կացուցանէր, զաշակերտս գործոյն՝ պետս յօրինէր, ջանայր ստիպէր ի բաց կալ ի հպարտութենէ և յարբեցութենէ, զծերս պատվել և յեկեղեցիս կանխել։ Եւ իւր էր սովորութիւն երեկոյի և առաւօտի, այն և առանց եկեսցէի ոչ նիրհել։ Եւ ոչ գիտէր զդպրութիւն և սակս զբաղմանց ոչ կարէր ուսանել։ Ստիպէր հարկէր զամուսինն իւր բովանդակ ունել զեկեսցէն ի բերան Հաւատով խոստովանումն՝ սահման արարեալ իւրեանց։ Այս Ամբակում գնացեալ յԵրուսաղէմ ի ժամանակ ամենահանճար և բազմանորոգ առն Աստուծոյ հայրապետին Գրիգորի՝ յաջորդի սրբոյ Աթոռոյն, յամի որ Ցոյնք խայտառակեալ ծուռ առնէին զտօն Զատկին ի Ծաղկազարդէ կիրակին, որ Ապրիլ Զ, ի թվին ՌԶԳ։ Եւ պատմէր ամենայն գիտութեամբ զվատաբաստիկ լինել Ցունաց ի նոյն վատթարախորհուրդ, իսկ զՀայոցս ամենապայծառութիւն մեծի խրախութեան սրբոյ Զատկին, որ ի ԺԳ-ն Ապրիլի, յոյժ տենչազարդութիւն, որ յելանելն լուսոյն ի կենսատու Սուրբ Գերեզմանէն, ասէ, սփռէր առ ի հոգիս մեր ամենաճեմ հրճուարանին որ ի մէջ տաճարին և աշխարհաժողով մատրանին մեծի Ցարութեան Փրկչին մերոյ Քրիստոսի Յիսուսի, ծածկափղձկեալ[1]) լինելոյ այլասեռիցն առ ի բերկրութիւն արմենազնիս Հայոց ուղղադատութեան զնախնիսն ճշմարտելով։ Եւ սիրեցեալ լինէր յաչս սուրբ հայրապետին, և յորժամ գայր անտի, գրէ գիր սուրբ հայրապետն Գրիգոր առ եկեղեցին Սուրբ Սարգսի թէ Իմ երեսփոխան է Ամբա-

1) ծածկափղցկեալ.